ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ

# ԳԱՆՁԱՆ ԿՐԿԻՆ ՄԵԾԱՐԵՑ ԻՐ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ ԶԱՎԱԿԻՆ

*Հիսուներկու տարի անընդմեջ, սկսած 1967 թվականից, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղը, յուրաքանչյուր տարվա հուլիսի նախավերջի կիրակին նվիրում է հայ դասական գրականության ամենանշանավոր քնարերգուին, իր գրկում ծնված անզուգական զավակին՝ Վահան Տերյանին (1885-1920) ու նրա բանաստեղծական գանձարանին:*



ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ

Ավանդույթը չխախտվեց նաեւ այս տարի: Հուլիսի 21-ին Գանձա գյուղ էին ժամանել հյուրեր Թբիլիսիից, Վրաստանի տարբեր տարածաշրջաններից, Հայաստանից, Ռուսաստանից: Ներկաները նախ մասնակցեցին Վ.Տերյանի պապի՝ Տեր Գրիգորի կողմից 1859 թվականին կառուցված Սուրբ Կարապետ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ մատուցված սուրբ պատարագին:

Այնուհետեւ հյուրերը շրջայց կատարեցին Վահան Տերյանի տուն-թանգարան, որտեղ նրանց դիմավորեց տնօրեն Վաղարշակ Թանգամյանը: Նա ներկաներին ծանոթացրեց հայ մեծ քնարերգուի մասին պատմող թանգարանային նմուշներին ու փաստագրական նյութերին:

Միջոցառման ծաղկեպսակը ավանդական դաշտահանդեսն էր: Ելույթ ունեցողները՝ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ, Նինոծմինդայի մունիցիպալիտետի կրթության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի ծառայության պետ Գեւորգ Սնխչյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը, Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, «Վրաստան» թերթի խմբագիր, «Վրաստանի հայերի միության» փոխնախագահ Վան Բայբուրթյանը,, նինոծմինդացի բանաստեղծ Գեւորգ Հայասան, աշուղ Ջիվանու տուն-թանգարանի աշխատակից Հասմիկ Սաղաթելյանը, «Հանուն խաղաղության» ՀԿ նախագահ Գիորգի Թումասյանը մեծարեցին եւ եւս մեկ անգամ իրենց խոնարհումը բերեցին հայ դասական գրականության քնարերգության հիմնադրին:





Տոնախմբությանն իրենց ներկայությամբ պատվեցին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Դավիթ Ճինաձեն, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահության անդամ, Ռուսաստանի Պերմ քաղաքից, ծնունդով Ծալկայից Վաղարշակ Սարգսյանը, Ախալցիխեի, Ծալկայի, Ասպինձայի եւ Ախալքալաքի քաղաքապետեր Զազա Մելիքիձեն, Իլիա Սաբաձեն, Զուրաբ Էնդելաձեն եւ Յուրի Ունանյանը, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների սակրեբուլոների նախագահներ Նաիրի Իրիցյանը եւ Սմբատ Կյուրեղյանը, Հայաստանի Սփյուռքի նախարարության դեպարտամենտի պետ Տարոն Շագոյանը, Ծալկայի սակրեբուլոյի նախագահի տեղակալ Գոչա Խաչատրյանը եւ ուրիշներ:

Ժողովրդական տոնը պսակվեց Ախալքալաքի, Ծալկայի եւ տեղի երգի-պարի համույթների ու անհատ երգիչ-երգչուհիների եւ ասմունքողների ելույթներով:

*Լուսանկարները՝ ԲՈՐԻՍ ԿԱՐՍԼՅԱՆԻ*

ԿՐԹԱԿԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԿՀԵՏԱՁԳՎԻ



Ավարտվեցին միասնական ազգային քննությունները: Ինչպես հայտարարեց Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Մայա Միմինոշվիլին, աշխատանքներն ակտիվ ստուգման փուլում են, սակայն նախնական արդյունքների հրապարակումը՝ ի տարբերություն նախկինի, կուշանա մի քանի օրով: Մայա Միմինոշվիլին դրա պատճառ է անվանել է ժամանակացույցի փոփոխությունը:

- Շատ մեծ հույս ունեմ, որ մեր դիմորդներն ըմբռնումով կմոտենան դրան: Մենք կանենք առավելագույնը, որպեսզի որքան հնարավոր է սեղմ ժամկետներում հրապարակենք արդյունքները: Հավանաբար, օգոստոսի սկզբին կհայտարարենք նախնական արդյունքները,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

Նրա խոսքով, ժամանակացույցի փոփոխման պատճառով, կհետաձգվի նաեւ դիմորդների վերջնական ընտրություն անելու ժամկետը:

- Դիմորդներն իրենց ընտրությունը կարող են փոխել՝ նախքան բողոքարկման վերջնական արդյունքների հրապարակումը: Դա հնարավոր է՝ լինի օգոստոսի 15-ը,- ասաց Միմինոշվիլին:

Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տնօրենն այս տարվա ժամանակացույցի փոփոխման պատճառ է անվանում օդի բարձր ջերմաստիճանը:

საქართველოს იუსტიციის სამინისტრო

## ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱ

Ի՞նչ ձեռքբերումներ ունեն արդարադատության նախարարությունը եւ Վրաստանի կառավարությունը Եվրամիության հետ ասոցիացման օրակարգի կատարման գործընթացում, նաեւ՝ անայցեգրային պայմանակարգի հաջող իրականացման տեսանկյունից, ինչպե՞ս կշարունակվեն իրավական համակարգի բարեփոխումները՝ դատական ընդհանուր համակարգում կոմերցիոն պալատների ներդրումը եւ՝ օրենքի պարզաբանման վերաբերյալ, ի՞նչ վարկանիշներ ունի Վրաստանը կոռուպցիայի եւ թրեֆիկինգի դեմ պայքարի ուղղությամբ միջազգային ուսումնասիրություններում, եւ ինչ դեր ունի արդարադատության նախարարությունը վերոնշյալ ձեռքբերումներում, ինչպե՞ս պետք է շարունակվեն բարեփոխումները դատավարական համակարգում՝ այս թեմաների շուրջ կայացան քննարկումներ Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու եւ Վրաստանի հարցերով եվրախորհրդարանի զեկուցող Անդրես Մամիկինսի հանդիպմանը:



Հուլիսի 24-ին, Վրաստանի արդարադատության նախարարությունում տեղի ունեցած հանդիպմանը ներկա էին նաեւ արդարադատության փոխնախարարներ Միխեիլ Սարջվելաձեն ու Գոչա Լորթքիփանիձեն, եվրախորհրդարանի պատվիրակության անդամներ:

Թեա Ծուլուկիանին եվրախորհրդարանի զեկուցողին տեղեկատվություն փոխանցեց այն բարեփոխումների վերաբերյալ, որոնք իրականացվում են Վրաստանում՝ արդարադատության նախարարության ղեկավարությամբ:

Անդրես Մամիկինսը արդարադատության նախարարին շնորհակալություն հայտնեց եւ հաջողություններ մաղթեց իրականացվելիք բարեփոխումների գործում:

## ԱՆԱՊԱՍՏԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Վրաստանի արդարադատության փոխնախարար Գոչա Լորթքիփանիձեն մասնակցեց փողոցներում ապրող եւ աշխատող երեխաների իրավիճակի ուսումնասիրության շնորհանդեսին:



Փաստաթղթում դրական գնահատական է տրվել արդարադատության նախարարության կողմից իրականացվող այն բարեփոխումներին, որոնք անցկացվել են՝ ի պաշտպանություն փողոցներում ապրող եւ աշխատող երեխաների: Դրանց թվում նշված է արդարադատության նախարարի կողմից 2016 թվականին պատրաստած օրենսդրական նախագիծը, որը նախատեսում էր փողոցներում ապրող եւ աշխատող երեխաների նույնականացման փաստաթղթի անվճար հանձնում: Նաեւ ուսումնասիրությունում դրական գնահատական է տրվել իրավախախտումների կանխման կենտրոնի փողոցներում ապրող եւ աշխատող երեխաների համար իրականացվող ծրագրերին:

Ինչպես իր ելույթում նշեց Գոչա Լորթքիփանիձեն, արդարադատության նախարարը մի շարք նշանակալի քայլեր է իրականացրել անապաստան երեխաների իրավական կարգավիճակը օրենսդրական մակարդակով կարգավորելու նպատակով: Նրա խոսքով, նախարարությունում ձեւավորվել է աշխատանքային խումբ, որը ձեռնամուխ է եղել անապաստան երեխաների հարցով ռազմավարական փաստաթղթի մշակմանը:

Նշենք, որ, շնորհանդեսի շրջանակներում, ներկայացվեցին նաեւ հանձնարարականներ, թե ինչպես պետք է իրականացվի անապաստան երեխաների հետ կապված հիմնախնդիրների կարգավորումը: Որպես լուծման միջոց նշված է իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների, այնպես էլ՝ սոցիալ-հանրակրթական ակտիվությունների իրականացումը:

Ուսումնասիրություն անցկացվել է նորվեգական հետազոտական «UNISEF» կազմակերպության կողմից:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՍԻՐՈ ՄԵՋ ԱՄԵՆԱՀԱՎԱՏԱՐԻՄ ՏՂԱՄԱՐԴԻԿ՝ ԸՍՏ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԻ ՆՇԱՆԻ



*Հետաքրքիր է, որքանով է կյանքում իրեն արդարացնում՝ ըստ կենդանակերպի զույգի ընտրությունը: Ցանկալի կլիներ իմանալ, այդ առումով կոնկրետ ուսումնասիրություններ արվե՞լ են, թե՞ ոչ:*

***Ի.Մարտիրոսյան***

***Նինոծմինդա***

Նախօրոք իմանալ, թե որքան հավատարիմ կլինի ձեր ընտրյալը, գրեթե անհնար է: Սակայն աստղաբանները համոզված են, որ դա կարելի է որոշել՝ ըստ կենդանակերպի նշանի:

Մասնագետները կազմել են ամենահավատարիմ տղամարդկանց ցանկը:

**Ամենահավատարիմ կենդանակերպի նշաններն են.**

Երրորդ տեղը կիսում են Կույսերը եւ Կարիճները: Տղամարդ-Կույսերը շատ մաքրասեր են եւ բծախնդիր՝ զույգի ընտրության հարցում: Նրանց բնորոշ չեն հանկարծակի կապերը: Նույնիսկ հարաբերությունների խզումից հետո նրանք միանգամից չեն ձգտում սկսել նոր սիրավեպ: Կարիճները, հակառակը, ունեն անհագ սեքսուալ ախորժակ: Սակայն, ամուսնությունից հետո նրանք իմաստ չեն տեսնում դավաճանել իրենց երկրորդ կեսին, քանի որ վստահությունը նրանց համար մեծ նշանակություն ունի: Քանի դեռ Կարիճի սեքսուալ պահանջները բավարարված են, նրա զույգն անհանգստանալու կարիք չունի:

Որքան էլ զարմանալի է, երկրորդ տեղում են տղամարդ-Առյուծները: Չնայած նրանց բուռն եռանդին եւ սիրառատությանը, հենց նրանք են մոնոգամ: Կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչները երկար են փնտրում իրենց ընտրյալին: Սակայն այն կինը, ում բախտ է վիճակվել կյանքը կապել նրա հետ, կարող է վստահ լինել նրա հավատարմության մեջ:

**Առաջին տեղում են պրագմատիկ Այծեղջյուրները.**

Ունենալով բարդ բնավորություն, նրանք հակված են փակ լինելուն եւ ընտանիքում յուրաքանչյուր բարդությունների ժամանակ ամբողջությամբ ընկղմվում են աշխատանքի մեջ: Կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչներն ուղղակի իմաստ չեն տեսնում ակնթարթային գայթակղությունների մեջ: Զույգի ընտրությանը նրանք մոտենում են մեծ պատասխանատվությամբ եւ շատ են հարգում իրենց ընտրությունը, որպեսզի կողքից սիրավեպ սկսեն:

Զարմանալիորեն այս ցուցակի մեջ չեն մտել «տնական» նշանները՝ Ցուլը եւ Խեցգետինը: Տղամարդ-Ցուլը հակում չունի սիրային ինտրիգաների, սակայն այն կնոջը, ով համառորեն կհետապնդի՝ չի մերժի: Լուռ տղամարդ-Խեցգետինները՝ նույնպես սիրուհիներ են ունենում: Կենդանակերպի այս ներկայացուցիչը կփնտրի զգացմունքներ, որոնք իրեն պակասում են ընտանեկան կյանքում:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## 83 ՄԻԼԻՈՆՈՎ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

***2017-ի համեմատ՝ Երկիր մոլորակի բնակչությունն ավելացել է 83 միլիոնով եւ կազմում է ավելի քան 7 մլրդ 635 մլն մարդ: Այդ մասին հայտնում է գերմանական «Երկրի բնակչությունը» (DSW) հիմնադրամը:***



Ըստ հիմնադրամի մասնագետների, աճի հիմնական պատճառներից մեկը անցանկալի հղիությունների աճն է: Ըստ հիմնադրամի ղեկավար Ռենատա Բերի՝ աֆրիկյան շատ երկրների կանայք ավելի շատ երեխաներ ունեն, քան՝ կուզենային: Դա պայմանավորված է կրթվածության ցածր մակարդակով եւ հակաբեղմնավորիչների պակասով:

Գերմանական «Երկրի բնակչությունը» (DSW) հիմնադրամի հրապարակած տվյալների համաձայն, յուրաքանչյուր 10 վայրկյանը մեր Երկիր մոլորակում 26 երեխա է ծնվում: Աճը հատկապես նկատելի է Աֆրիկայում: 2050-ին մոլորակի բնակչությունը 1,3 մլրդ-ից կհասնի 2,5 մլրդ, գրում է Deutsche Welle-ն:

ԵՄ բնակչությունը, 2018-ի հունվարի 1-ի դրությամբ, կազմել է 512,6 մլն մարդ, 1,1 մլն աճը պայմանավորված է ներգաղթով, ըստ մասնագետների:

ԵՄ ամենախիտ բնակեցված երկիրը Գերմանիան է, որը 82,9 մլն բնակիչ ունի, որին հաջորդում են Ֆրանսիան՝ 67,2 մլն բնակչությամբ եւ Մեծ Բրիտանիան՝ 66,2 մլն:

Իսկ ըստ ՄԱԿ տվյալների, աշխարհի ամենախիտ բնակեցված քաղաքը Տոկիոն է՝ 37 մլն բնակչությամբ: Նյու Դելիում 29 մլն բնակիչ կա, իսկ չինական Շանհայում՝ 26 մլն մարդ: Մոսկվայի բնակչությունը 12 մլն է, Բեռլինում մոտ 3,5 մլն բնակիչ կա:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԺՊԻՏԸ՝ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՈՇՄՎԵԼՈՒ ՀԻԱՆԱԼԻ ՄԻՋՈՑ

***Մարդիկ անհամեմատ ավելի լավ են հիշում անծանոթների լուսանկարները, եթե նրանք ժպտում են կամ դրսեւորում՝ այլ ուժեղ հույզեր: Այդ մասին բրիտանացի գիտնականները հայտարարում են British Journal of Psychology հանդեսում հրապարակված հոդվածում: «Մարդու անձը լուսանկարով որոշելը կարեւոր դեր է խաղում մեր կյանքում, սակայն մենք գիտենք, որ մեր ուղեղը չափազանց վատ է գլուխ հանում այդ խնդրից:***

«Փաստաթղթերը կեղծելը եւ ուրիշների անձնական տվյալներն օգտագործելն այսօր հսկայական բազմաշերտ խնդիր է, ուստի մեզ համար չափազանց կարեւոր է անձի ճանաչման նոր մեթոդներ գտնելը»,- պատմում է Յորքի համալսարանի (Մեծ Բրիտանիա) աշխատակցուհի Միլա Միլեւան: Մարդու արտաքինը շատ մեծ դեր է խաղում այն բանում, թե ինչպես է զարգանում նրա կյանքը, ընդ որում, այն ազդում է ոչ միայն անձնական կյանքի, այլեւ կարիերայի եւ, ընդհանուր առմամբ, հասարակության մեջ նրա դիրքի վրա:



Օրինակ, 2011 եւ 2013 թվականներին երկու խումբ բրիտանացի գիտնականներ բացահայտել են, որ գեղեցիկ մարդիկ, միջին հաշվով, ունեն ավելի բարձր IQ եւ հաճախ են տեղավորվում ավելի հեռանկարային աշխատանքի, քան սովորական եւ անհրապույր արտաքնով մարդիկ: Նման կախվածություն գոյություն ունի ինչպես տղամարդկանց, այնպես էլ՝ կանանց շրջանում, եւ բազմաթիվ մարդկանց, հատկապես՝ թույլ սեռի ներկայացուցիչներին, ստիպում է արտաքինը փոխել պլաստիկ վիրահատությունների օգնությամբ կամ փոխել իրենց պահելաձեւը, այդ թվում նաեւ այն, թե ինչպես են իրենք ժպտում:

Օրինակ, նման մարդկանցից շատերն այն կարծիքին են, որ ընդգծված, մինչեւ ականջները տպավորիչ ժպիտն ավելի շատ է զրուցակցին դեպի իրենց տրամադրում, քան մարդու դեմքի սովորական արտահայտությունը: Միլեւան եւ համալսարանի նրա գործընկերները գտել են ժպիտի եւս մեկ հետաքրքիր հատկություն, փորձելով բացահայտել այն գործոնները, որոնք մարդուն խանգարում են նույն մարդուն ճանաչել այն լուսանկարներում, որոնք արվել են տարբեր լուսավորության պայմաններում կամ տարբեր իրավիճակներում, ինչպես նաեւ՝ գտնել դրանց համակարգչային մշակման հետքերը:

Ուսումնասիրելով այդ խնդիրը՝ բրիտանացի գիտնականներն ուշադրություն են դարձրել այն բանի վրա, որ, աշխարհի երկրների մեծ մասի չափորոշիչներով, փաստաթղթերի, ֆոտոռոբոտների եւ «պաշտոնական» այլ թղթերի լուսանկարները մեկ ընդհանուր գիծ ունեն՝ դրանց վրա մարդկանց դեմքի արտահայտությունը չեզոք է եւ չիհշվող: Դա նրանց դրդել է ստուգել՝ ինչպես են տարբեր հույզերը, այդ թվում՝ ժպիտները, ազդում այն բանի վրա, թե որքան լավ ենք մենք մտապահում անծանոթներին եւ նրանց լուսանկարները ճանաչում հետագայում: Դրա համար հետազոտողները կազմել են 34 եւ 40 ուսանողներից բաղկացած երկու խումբ եւ նրանց խնդրել՝ համադրել իրենց անծանոթ մարդկանց լուսանկարների երկու հավաքանի:

Առաջինում ներկայացված են եղել միայն «լուրջ» դիմանկարներ, իսկ երկրորդում նույն այդ մարդիկ ժպտում են կամ որեւիցե այլ հույզ արտահայտում: Առաջին իսկ դիտարկումները ցույց են տվել, որ ժպիտները զգալիորեն մեծացնում են մարդու ճանաչելիությունը: Երկրորդ խմբի ուսանողները, միջին հաշվով, 14 տոկոսով ավելի հաճախ են որոշել, որ լուսանկարներում պատկերված են նույն մարդիկ, եւ 7 տոկոսով ավելի լավ են գտել տարբերությունները նման, բայց տարբեր մարդկանց լուսանկարների միջեւ:

Եվ ահա թե ինչն է հետաքրքիր, երբ գիտնականները որոշել են «կեղծել» դիմանկարները եւ ժպիտներ են ավելացրել մի քանի «լուրջ» կամ տխուր դեմքերով լուսանկարներին, ուսանողներն սկսել են չափազանց վատ գլուխ հանել այդ խնդրից: Այդ ամենը, ինչպես կարծում է Միլեւան, վկայում է այն մասին, որ անձնագրերի եւ մյուս փաստաթղթերի համար լուսանկարներ պատրաստելու կարգը պետք է փոխել. եթե մարդիկ ժպտան այդ լուսանկարներում, նրանց անհամեմատ ավելի դյուրին կլինի հիշել եւ հեշտ կլինի գտնել նրանց փաստաթղթերի կեղծման հետքերը:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:

***ԵՂԻՇԵ***
***V դար***
***Հայ պատմիչ***

Երբ ագռավը վարդ է գտնում, իրեն սոխակ է երեւակայում:

***ՎՐԱՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ***

Իմաստունը գոհանում է քչով, իսկ հիմարին ամեն ինչ քիչ է թվում:

***ՖՐԱՆՍՈՒԱ ԴԸ ԼԱՌՈՇՖՈՒԿՈ***
***(1613-1680)***
***Ֆրանսիացի քաղաքական գործիչ***

Հանցագործության մեծագույն խրախուսանքը անպատժելիությունն է:

***ՑԻՑԵՐՈՆ***
***(մ.թ.ա.106-43)***
***Հռոմեական քաղաքական գործիչ***

Միակ բանը, որն իրականում նշանակություն ունի, դա այն է, ինչ անում եք այժմ, ժամանակի տվյալ պահին: Միակ բանը, որ կարող է փոխել ձեր մտքերը, դա այն է, ինչի մասին դուք մտածում եք հենց հիմա, ժամանակի տվյալ պահին:

***ՄԱՐԿ ՏՎԵՆ***
***(1835-1910)***
***Ամերիկացի գրող***

Երբ դուք փորփրելով վերջապես հասնեք «հաջողություն» բառի խորքային իմաստին, կբացահայտեք, որ այդ իմաստն ամփոփված է ընդամենն անշեղորեն առաջ ընթանալու ձգտման մեջ:

***ՈՒԻՆՍՏՈՆ ՉԵՐՉԻԼ***
***(1874-1965)***
***Միավորված թագավորության վարչապետ***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Յուրաքանչյուր մայր երազում է, որ ամուսնության հարցում իր աղջիկն ավելի երջանիկ լինի, քան ինքն է եղել: Բայց յուրաքանչյուր մայր կարծում է, որ, իր որդու բախտը, ամուսնության հարցում, ավելի քիչ է բերել, քան վերջինիս հոր բախտը:*

*☺ Մայրը՝ աղջկան.*

*- Բալե'ս. ապագա մարդուդ ընտրելիս բոլոր մանրամասները պիտի հաշվի առնես: Նայի, տղամարդ կա, որ ձեռքից ամեն ինչ գալիս է. հա'մ սառնարանը կարող է նորոգել, հա'մ մեքենան, հա'մ թեյնիկն ու հեռուստացույցը, հա'մ կահույքը, ամեն ինչ: Հիմա. եթե դու էդպիսի տղամարդու ընտրես՝ կյանքում ոչ մի նոր բան չես ունենալու:*

*☺ - Սիրելի'ս, այս ի՞նչ գեղեցիկ զգեստ ես հագել:*

*- Իսկ ես ինքս գեղեցի՞կ եմ:*

*- Սիրելի'ս, եթե այստեղ միայն քո շորը լիներ, ես, իհարկե, կլռեի:*

*☺ Մա'մ, ես արդեն 25 տարեկան եմ, բավականաչափ մեծ՝ սեփական որոշումներ կայացնելու համար: Եթե ես ասեմ փլեյսթեյշն, որ գնելու եմ, ուրեմն՝ ես կգնեմ այն: Փող կտա՞ս:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է ՆԱՏՕ-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Մենք բազում տարիներ է համագործակցում ենք ՆԱՏՕ-ի հետ, այդ գործընթացը կշարունակվի եւ սա համագործակցություն չէ որեւէ մեկի դեմ: Սա տարածաշրջանային համագործակցություն է, որի շրջանակներում համագործակցում են նաեւ Վրաստանի հետ, քանի որ, ցավոք, մենք եւ Վրաստանն այս ուղղությամբ վարում ենք տարբեր արտաքին քաղաքականություն: Անհրաժեշտ է հավասակշռության բերել իրավիճակը, մեզ համար շատ կարեւոր է ՆԱՏՕ-ի շրջանակներում Վրաստանի հետ համագործակցությունը,-հայտարարեց Հայաստանի վարչապետը:

Անդրադառնալով երկաթուղու թեմային, Հայաստանի վարչապետը նշեց, որ Հայաստանը կանի ամեն բան, որպեսզի Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ երկաթուղու գործարկման հարցն ունենա առաջընթաց եւ հավելեց, որ Հայաստանը պատրաստ է, նշված թեման քննարկել ինչպես վրացական, այնպես էլ ռուսական կողմի հետ, քանի որ դա Հայաստանի շահերում է:

- Այժմ իրագործվում է ընթացքը, երբ տրանսպորտային փոխադրումների հետ կապված միջնորդ է լինելու շվեյցարական ընկերությունը, սակայն սա կապված է ոչ թե Աբխազիայի երկաթուղու, այլ՝ ավտոճանապարհի հետ: Հույս ունեմ, որ կունենանք «Վերին Լարսի» այլընտանքային ճանապարհ: Կարծում եմ, այս հարցի նկատմամբ պետք է ցուցաբերել փուլ առ փուլ մոտեցում: Եթե մենք կարողանանք առաջ շարժվել փոքր քայլերով, դա կլինի դրական: Երկաթուղու հարցը հետաքրքիր է նաեւ մեզ համար, եւ մենք կօգտվենք բոլոր հնարավորություններից, որպեսզի այս թեման քննարկենք վրացի եւ ռուս գործընկերների հետ: Դա Հայաստանի շահերում է,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

## ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇՐՋԱԴԱՐՁԵՐԸ ԲԱՑԱՌՎՈՒՄ ԵՆ

*Հայաստանի նոր կառավարությունը շարունակելու է կատարել միջազգային այն պարտավորությունները, որոնք առկա էին մինչ թավշյա հեղափոխությունը: Այս մասին հայտարարել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով հարցին, թե ինչպես է Հայաստանը, լինելով ՀԱՊԿ անդամ, սերտ համագործակցում ՆԱՏՕ-ի եւ Արեւմուտքի հետ:*

- Մենք հստակ հայտարարել ենք, որ Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ շրջադարձեր չեն լինելու: Ես որեւէ ծեւաչափի մասնակցություն չեմ ունեցել, որն աննախադեպ լինի մեր արտաքին քաղաքականության համար,- նշեց Հայաստանի վարչապետը:

Անդրադառնալով հուլիսին ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակում Բրյուսել կատարած այցին՝ Փաշինյանը նշեց, որ Հայաստանը մասնակցել է ոչ թե ՆԱՏՕ-ի գագաթաժողովին, այլ՝ Աֆղանստանում, ՆԱՏՕ-ի շրջանակում, խաղաղապահ գործունություն իրականացնող երկրների համաժողովին:

Նա ընդգծեց, որ Հայաստանը Եվրամիության հետ՝ մինչեւ թավշյա հեղափոխությունը, ունեցել է հարաբերություններ, ստորագրել է ընդլայնված եւ համապարփակ համագործակցության մասին համաձայնագիր, որը, մինչեւ հեղափոխությունը, վավերացվել է Հայաստանի խորհրդարանի կողմից:

Փաշինյանը նշեց, որ կառավարության արտաքին քաղաքականությունը 100 տոկոսով համապատասխանում է ավելի վաղ արված հայտարարություններին:

## ԿԱՐԵՎՈՐՎԵԾ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԲԱՆԿԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ



*Հուլիսի 25-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպում ունեցավ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Արեւելյան Եվրոպայի եւ Կովկասի երկրների հարցերով համակարգող տնօրեն՝ Ֆրենսիս Մալիժի գլխավորած պատվիրակության հետ:*

Հանդիպմանը Արմեն Սարգսյանը նշել է, որ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը Հայաստանի տնտեսության մեջ ունի բավական մեծ ներգրավվածություն եւ կարեւորել է բանկի ներդրումը հանրային ու մասնավոր սեկտորների համագործակցության, փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման գործում:

Հայաստանի նախագահն ու Բանկի պաշտոնյաները խոսել են գործընկերության առաջնահերթությունների, ընթացիկ ծրագրերի, տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնման նոր հնարավորությունների մասին:

## ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Հուլիսի 22-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում, հանդիպել է աշխարհի 15 երկրներից Հայաստան ժամանած 62 սփյուռքահայ ուսուցիչների հետ, ովքեր, մասնակցում էին վերապատրաստման մեկամսյա դասընթացների:*



Բարձրորեն գնահատելով սփյուռքահայ ուսուցիչների նախանձախնդրությունը՝ Վեհափառ Հայրապետը շեշտել է, որ մանկավարժները կարեւոր պատասխանատվություն են կրում այսօրվա եւ գալիք սերունդների դաստիարակության ու կրթության գործում: Նորին Սրբությունը հույս է հայտնել, որ այցը Հայաստան եւ մասնակցությունը դասընթացին նորանոր լիցքեր կհաղորդի նրանց՝ նոր ուժով եւ ավյունով շարունակելու ուսուցչական իրենց բարդ ու դժվարին առաքելությունը:

Հանդիպմանը անդրադարձ է արվել նաեւ Սփյուռքի առջեւ ծառացած արդի մարտահրավերներին՝ մասնավորապես հայապահպանությանը, հայեցի դաստիարակությանը, ինչպես նաեւ՝ մատաղ սերնդի մեջ աստվածասիրություն եւ հայրենասիրություն սերմանելու կարեւորությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանել է նաեւ հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին Սփյուռքում գործող հայկական դպրոցների եւ մայրենիի պահպանման խնդիրներին:

## ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

*Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին առաջադրվել է մեղադրանք:*



Հատուկ քննչական ծառայության հայտարարությունում ասվում է, որ Քոչարյանը մեղադրվում է բռնի կերպով իշխանության գլուխ գալու եւ սահմանադրական կարգը տապալելու մեջ: Գործը հարուցվել է 2008 թվականի մարտին զարգացած իրադարձությունների առնչությամբ:

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան միջնորդություն է ներկայացվել՝ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար:

Հիշեցնենք, որ 2008 թվականի մարտին Հայաստանում նախագահական ընտրություններում հաղթել է Սերժ Սարգսյանը, որին հետեւել են հանրահավաքներ: Մարտի 1-ին ոստիկանությունը հարձակվել է ցուցարարների վրա: Քիչ անց՝ բախում է սկսվել ոստիկանության եւ ակտիվիստների միջեւ, որի հետեւանքով զոհվել է 10 ցուցարար:

Նշենք, որ մարտի 1-ի գործով վկայի կարգավիճակով հարցաքննության է կանչվել նաեւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովը:

Հիշեցնենք, որ Յուրի Խաչատուրովը 2008 թվականի մարտի 1-ին զբաղեցնում էր Երեւանի կայազորի պետի պաշտոնը:

### ԿԱՅԱՑԱՎ ՓԱՇԻՆՅԱՆ-ՊՈՒՏԻՆ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԸ

*Հուլիսի 23-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց են ունեցել: Փաշինյանը եւ Պուտինը քննարկել են երկկողմ հարաբերություններին եւ ԵԱՏՄ-ին վերաբերող հարցեր:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՉԻ ԳՆԱԼՈՒ

*Հայաստանի կառավարությունը չի գնալու արձակուրդ: Այդ մասին հայտնել Ն.Փաշինյանը՝ ասուլիսի ընթացքում պատասխանելով հարցին, թե երբ է մտադիր գործադիրը մեկնել հանգստի:*

*«Կառավարությունը չի կարող գնալ արձակուրդ, քանի որ երկիրը չի կարող լինել առանց կառավորության: Առանձին ներկայացուցիչներ, ովքեր հոգնած են, գուցե գնան արձակուրդ: Իսկ ընդհանուր առմամբ՝ ոչ»,- ասաց Փաշինյանը:*

### ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԾԽԱԽՈՏԻՑ ԶԵՐԾ ԵՐԿԻՐ

*Հայաստանը պետք է լինի ծխախոտից զերծ՝ մաքուր օդով երկիր: Այդ մասին Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը գրել է իր ֆեյսբուքյան էջում, նշելով, որ ծխախոտն է սիրտանոթային հիվանդությունների ամենամեծ ռիսկի գործոնը:*

*«Սրտամկանի ինֆարկտն ու գլխուղեղի ինսուլտը դրանցից ամենավտանգավորներն են: Եվ մենք այս երկու հիվանդությունների բուժումը ավելի հասանելի դարձնելու հետ մեկտեղ, պետք է նվազեցնենք դրանցով հիվանդայությունը՝ կտրուկ իջեցնելով ծխախոտի օգտագործումը»,- նշված է նախարարի գրառման մեջ:*

### ԳՐԱՆՑՎԵԼ Է ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃ

*Երկաթուղային ուղեւորաբեռնափոխադրումների ծավալներն աճել են 2018 թվականի առաջին երեք ամիսների ընթացքում: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակի արդյունքներով պահպանվել է փոխադրումների աճի դրական դինամիկան: Վիճակագրական տվյալների համաձայն, երկաթուղային բեռնափոխադրումների ծավալների աճը գերազանցել է նախատեսված ցուցանիշը 12,6%-ով, իսկ անցյալ տարվա շեմը՝ 6,3%-ով: Բեռնումն ավելացել է 6,1% եւ 2,3%-ով համապատասխանաբար: Երկաթուղային ճանապարհով արտահանումը ծրագրված ցուցանիշը գերազանցել է 29,3%-ով, իսկ 2017 թվականի հունվար-հունիսի մակարդակը՝ 27,9%-ով:*

### ՎԱԶՔՈՎ՝ ՄԱՐՍԵԼԻՑ ԵՐԵՎԱՆ



*«Խաղաղության վազք»-ով Մարսելից մինչեւ Երեւան: Լեռնագնաց Արա Խաչադուրյանը անցնելով 4550 կմ Ֆրանսիայի Մարսել քաղաքից 107 օրում հասել է Երեւան՝ Հանրապետության հրապարակ: Արայի խոսքով՝ նախաձեռնության նպատակն աշխարհին խաղաղության կոչ անելն է:*

*Վազքով Ֆրանսիայից Հայաստան հասնելու որոշումն Արան կայացրել էր դեռ երկու տարի առաջ, սակայն ինչ-ինչ պատճառներով գաղափարը հետաձգվել: Հիմա դրա համար չի փոշմանում:*

*Արան 15 օր կմնա Հայաստանում, կայցելի նաեւ Արցախ:*

ՎԱՐԿԱՆԻՇ

# ԹԲԻԼԻՍԻԻ «ՊԼԵԽԱՆՈՎԻ» ԹԱՂԱՄԱՍԸ՝ ԱՇԽԱՐՀԻ 12 ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԹՎՈՒՄ



Ինչպես նշել է վրացական «Ռեզոնանսի» թերթը, «Ֆորբս» ամսագիրը հրապարակել է լավագույն թաղամասերի ցուցակը, որտեղ տեղ է հատկացվել նաեւ Վրաստանի, մասնավորապես, Թբիլիսիի Պլեխանովի (այսօր՝Դ.Աղմաշենեբելու պողոտա) թաղամասին: Պարբերականի գնահատմամբ, նախկին Խորհրդային Միության երկրներում, մասնավորապես՝ Վրաստան եւ Թբիլիսի զբոսաշրջությունները լայն ընդգրկում են ստացել: Պարբերականի տեղեկությամբ, զբոսաշրջիկների մոտ տպավորվել է հին Թբիլիսին, առավելապես Պլեխանովի թաղամասը:

ՍՊՈՐՏ

## ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՓՈԹԻԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻՑ




Փոթիում եզրագիծը հատեց շախմատի միջազգային մրցաշարը: Այն անցկացվեց երկու աստիճանով՝ A մրցաշարին մասնակցում էր 46 շախմատիստ, այդ թվում՝ 7 գրոսմայստեր: Մասնակիցների թվում էր նաեւ Հայաստանը ներկայացնող 10 շախմատիստ: 9 հնարավորից վաստակելով 7 միավոր՝ մրցաշարի միանձնյա հաղթող դարձավ Ուզբեկստանը ներկայացնող 13-ամյա միջազգային վարպետ Ջավոհիր Սինդարովը: Տիգրան Հարությունյանը եւ Վրաստանը ներկայացնող ճանաչված գրոսմայստեր Լեւան Պանցուլաիան վաստակեցին 6.5-ական միավոր եւ կիսեցին 2-3-րդ հորիզոնականները: Լրացուցիչ ցուցանիշների հաշվարկից հետո, Հարությունյանը գրավեց 2-րդ հորիզոնականը:

B մրցաշարում հաղթող դարձավ Վրաստանի ներկայացուցիչ Նիկա Վուլկովը: Հայաստանը ներկայացնող պատանի շախմատիստ Ալեքս Մանուկյանը գրավեց 2-րդ հորիզոնականը, իսկ Ռոմիկ Հակոբյանը՝ եզրափակեց լավագույն եռյակը:

## ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԹՎԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՅԵԼԻՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 15-ին Մոսկվայում, Լուժնիկների խաղադաշտում Ֆրանսիա-Խորվաթիա հանդիպմամբ ավարտվեց աշխարհի ֆուտբոլի 31-րդ առաջնությունը:

Ֆրանսիան 20-ամյա ընդմիջումից հետո երկրորդ անգամ նվաճեց աշխարհի ուժեղագույնի կոչումը, իսկ Խորվաթիայի թիմը պատմության մեջ առաջին անգամ արժանացավ առաջնության արծաթե մեդալի:

Ռուսաստանի 11 քաղաքներում անցկացված առաջնությունը որոշակիորեն տարբերվում էր նախորդներից: Նախ, առաջին անգամ, նման բարձր մակարդակի մրցաշարում ներդրվեց տեսադատավորի ինստիտուտը:

Ի տարբերություն նախորդների, սույն առաջնությունն աչքի ընկավ նաեւ սեփական դարպասներում անցկացված գոլերի քանակով՝ 10 գոլ: Մինչ այդ «ռեկորդակիրը» 1998 թվականի առաջնությունն էր՝ 6 գոլ:

Այս առաջնությունը յուրատեսակ ռեկորդ սահմանեց 11 մետրանոց տուգանային հարվածների քանակությամբ: Ընդհանուր առմամբ, առաջնության ընթացքում նշանակվեց 11 մետրանոց 28 տուգանային հարված, որից 22-ը ավարտվեց գոլով:

Մրցակցից դարպասն ուղարկված 146 գոլերից 31-ը, սովորականից շատ ավե-




լի (21 տոկոսը) խփվել է խաղի 80-րդ րոպեից հետո:

Հատկանշական է եւս մի հանգամանք. վերջին երեք առաջնություններում գործող չեմպիոնը չի կարողացել հաղթահարել խմբային մրցաշարի արգելագիծը: 2008 թվականի չեմպիոն Իտալիայի եւ 2010 թվականի չեմպիոն Իսպանիայի հավաքականների օրինակով, ներկայիս առաջնության խմբային արգելագիծը չկարողացավ հաղթահարել 2014 թվականի առաջնության հաղթող Գերմանիայի ազգային ընտրանին:

Նաեւ ավելացնենք, որ Ռուսաստանում անցկացված առաջնության Շվեդիա-Շվեյցարիա հանդիպմանը հաղթահարվեց, ընդհանուր առմամբ, առաջնությունների պատմության մեջ հանդիպումներին ներկա հանդիսատեսների 40 միլիոներորդ նշանագիծը: Այդ առումով ամենից շատ հանդիսատես եղել է 1994 թվականի ԱՄՆ-ի (3,59 միլիոն), 2004 թվականի Բրազիլիայի (3,43 միլիոն), 2006 թվականի Գերմանիայի (3,36 միլիոն) առաջնություններում: Ներկայիս մրցաշարին խաղադաշտերում խաղերին հետեւել է 2,,58 միլիոն ֆուտբոլասեր:

ՀԻՇԱՏԱԿ

## ԱՐՏՅՈՒՇ ՍԱՆՈՍՅԱՆ



82 տարեկան հասակում, իր երկարամյա կյանքի ուղին ավարտեց Արտյուշ Կարապետի Սանոսյանը, խորհրդային տարիների տնտեսական, կուսակցական ճանաչված հասարակական գործիչ:

Արտյուշ Սանոսյանը ծնվել է Նինոծմինդայի շրջանի Սաթխա գյուղում: Սովորել է տեղի տարրական, ապա՝ Բոգդանովկայի միջնակարգ դպրոցում: Երկու տարի ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել է Ախալքալաքի անասնաբուժական տեխնիկումը, որն ավարտելուց հետո՝ նշանակվել է Սաթխայի անասնաբուժական տեղամասի վարիչ: Աշխատանքին զուգընթաց, հեռակա կարգով սովորել է Նովոչերկասսկի անասնաբուժական ինստիտուտում, ուսումը շարունակել Երեւանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի բուժֆակում:

Աշխատել է հայրենի գյուղի կոլտնտեսության վարչության նախագահ, ընտրվել է կուսշրջկոմի քարտուղար՝ գյուղատնտեսության գծով, հետո՝ ժողովրդական վերահսկողության շրջանային կոմիտեի նախագահ: Այդ տարիներին էլ նա սովորել եւ ավարտել է կուսակցական բարձրագույն դպրոցը: Կուսակցական աշխատանքի հետ միաժամանակ վարել է հասարակական աշխատանք: Նրա անմիջական մասնակցությամբ եւ համագյուղացիների ջանքերով Սաթխայում հիմնվել է հուշապուրակ՝ նվիրված մեծ Հայրենականում զոհված սաթխացիների հիշատակին:

Բարեգործական աշխատանքներից եւս անմասն չի մնացել Արտյուշ Սանոսյանը: Իր ներդրումն ունի գյուղի եկեղեցու վերակառուցման եւ բարեկարգման գործում, մասնակցել է նաեւ գյուղում տարվող տարբեր բնույթի հասարակական եւ բարեգործական այլ միջոցառումների:

Արտյուշ Սանոսյանի լուսավոր հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, համագյուղացիների, բոլոր նրան ճանաչողների սրտերում:

*ՀԱՐԱԶԱՏՆԵՐ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ*



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Քառագագաթ լեռ Հայաստանում: 6.«Կարմեն» օպերայի հեղինակ կոմպոզիտորը: 9.Սարի, լեռան գլուխը, գագաթը: 10.Բուժել, ցավը մեղմել: 12.Միտք, գաղափար: 13.Հնչյունախումբ, որն իմաստ է արտահայտում: 14.Կապ չունեցող, իմաստազուրկ: 16.Պ.Սեւակի ժողովածուներից՝ «... լույս»: 18.Ամեհի, վայրի գազան: 19.Հոլանդացի ծովագնաց ... Թասման: 24.«Ես վեր ... ոգի առած» (Ավ.Իսահակյան): 25.Կարծր մետաղ: 29.Թբիլիսահայ գրող ... Թորգոմյան: 30.Թռչունների խումբը: 31.Կարս քաղաքն անվանել են «Կովկասյան ...»: 32.Խորհրդային դերասան, ռեժիսոր, մանկավարժ ... Բիկով: 33.Մարդու դեմքի մաս: 34.Ամերիկյան հայաշատ քաղաք ... Անջելես: 37.Հացահատիկի, ոսկու հնացած կշռաչափ: 38.Հայ բանաստեղծ, Խորհրդային Հայաստանի օրհներգի բառերի հեղինակը: 41.Լոկ, միայն: 42.Ժխտական նախածանց: 43.Սուտ խոսող, փչան: 44.Հայտնի դերասանուհի Նելլի ...: 47.Հայկական առակ՝ «Հարուստն ու ...: 50.Եկեղեցու այն տարածքը, ուր աղոթում են եւ պատարագ մատուցում: 52.Մաշտոցյան այբուբենի առաջին զինվորը: 53.Գետ Ֆրանսիայում: 54.Համադասական շաղկապ: 55.Ա.Պուշկինի ստեղծագործություններից՝ «Տերտերն ու իր ... ծառան»:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 1.Հայ առակագիր ... Խնկոյան: 2.Ավերված գյուղ Մասիսի լանջին: 3.Հայկական գինի: 4.«... ես թփի տակ ու ժպտում ես մանկան պես» («Մանուշակ»): 5.Պապակ, անջուր: 7.Դրոյի ծննդավայրը: 8.Ինչպես են կոչում Հայաստանի դրոշը: 11.Այլուրի զտիչը: 15.Ռուս մեծ բանաստեղծ Բորիս ...: 17.Հայկական այբուբենի տառ: 20.Թեքվել, ծռվել: 21.Պետություն Հնդկաչին թերակղզում: 22.Հայերի հին լեզուն: 23.Բարձրաստիճան զինվորական: 26.Իրավ, ճիշտ: 27.Ամուսնու քույրը: 28.Գետ Հարավային Ամերիկայում: 29.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 35.Թշնամի, հակառակորդ: 36.Հայ կին ֆիդայի, Աղբյուր Սերոբի կինը: 37.1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում ռուսների զենքը: 39.Միս տվող: 40.Համաստեղություն: 45.Հայաստանի խորհրդարանը՝ «Ազգային....: 46.Ծովափնյա քաղաք Ֆրանսիայում: 48.Թաղամաս Երեւանում: 49.«Ինչքան ցավ եմ տեսել ես, Նենգ ու ... եմ տեսել ես (Հովհ.Թումանյան): 51.Խոնավ, չչորացած: 53.Ցուցական դերանուն:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Մյուռենն: 8.Ամիկո: 9.Սեն: 10.Վզնոց: 13.Դիեգո: 18.Պռոշ: 19.Առաջանալ: 22.Անիրծ: 23.Իդիլիա: 28.Ուտեստ: 29.Բերած: 32.Որմ: 33.Փիստ: 34.Ասանկ: 37.Բոա: 39.Օլգա: 41.Ալյուր: 44.Հրատ: 46.Ժործ: 47.Բաս: 49.Կոխ: 50.Սամսունգ: 52.Ցիան: 54.Գաննա: 55.Դեգա: 56.Յա: 57.Անդին: 58.Ծածկ:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 1.Քուին: 2.Լենց: 3.Ժեստ: 4.Կանդ: 5.Թիթեռ: 6.Կոտոշ: 11.Զառա: 12.Ողջի: 14.Իպրիտ: 15.Գորիս: 16.Ինձ: 17.Էլի: 20.Անդրի: 21.Աղածո: 24.Դումա: 25.Լեքա: 26.Ատակ: 27.Դոդո: 30.Եփել: 31.Աստա: 35.Ստաժ: 36.Նոսր: 37.Բոր: 38.Ավտոգեն: 40.Գուսան: 42.Լոբի: 43.Ուժանակ: 44.Հասան: 45.Ակնդի: 48.Ասամ: 51.Մնա: 52.Ցած: 53.Այծ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445